

Վարդապատէն ԵՏԲ Չորրորդ Կրօնայի

20 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարեալ Նդէժ (Գ)	Էջ 2
Փառարանութիւն	Էջ 4
Յիսուսի Փորձութիւնը (Բ)	Էջ 5
Առաքելութեան Սկիզբ	Էջ 6
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(54.1-14)

Ուրախացի՛ր, Երուսաղէ՛մ, դուն՝ ամուլդ, որ չէիր ծնանք. ցնծութեամբ երգէ եւ աղաղակէ, դուն որ չէիր երկներ, որովհետեւ դուն, ամլութեան պատճառով լքուածդ աւելի շատ զաւակ պիտի ունենաս քան ամուսին ունեցողը,- կ'ըսէ Տէրը: Ընդարձակէ՛ վրանիդ տարածութիւնը, ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր. չուանները երկարէ, ցիցերը ամրացուր, որովհետեւ ամէն ուղղութեամբ պիտի տարածուիս շուտով, քու սերունդդ ազգերու պիտի տիրէ եւ անոնց լքած քաղաքները պիտի շինէ ու լեցնէ: Մի՛ վախնար, այլեւս ամօթով պիտի չմնաս. մի՛ ամէնար, այլեւս պիտի չնախատուիս. ամլութեանդ յաւիտենական ամօթը պիտի մոռնաս, այրիութեամբ նախատինքը բնաւ պիտի չյիշես, որովհետեւ Ստեղծիչդ քեզի ամուսին պիտի ըլլայ. Ան՝ որուն անունն է՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԵՆՈՒ ՏԷՐ, Իսրայէլի սուրբ Աստուածը՝ որ պիտի փրկէ քեզի եւ աժբողջ աշխարհին ալ Աստուածը պիտի կոչուի: Լքուած եւ վշտահար կին մը չէ՞իր, կամ մերժուած նորահարս մը չէ՞իր,

ողորմութիւնս
անպակաս
պիտի ըլլայ
քու վրայէդ,
խաղաղութեան
ուխտս
անասան
պիտի մնայ

երբ Տէրը քեզ կանչեց: Արդ, Աստուած կ'ըսէ. «Թէպէտ կարճ ժամանակ մը քեզ լքեցի, բայց ողորմութեամբ եւ սիրով քեզ պիտի ընդունիմ: Բարկութեան պահուն կարճ ատեն մը երես դարձուցի քեզմէ, բայց յաւիտենական սիրովս պիտի գթամ քեզի,- կ'ըսէ Տէրը, փրկիչդ: «Ինչպէս ժամանակին

ջրհեղեղէն ետք Նոյին երդում ըրի՝ այլեւս բնաւ երկիրը չպատժել ջրհեղեղով, նոյնպէս ալ հիմա կ'երդնում որ բարկութեամբս պիտի չպատժեմ քեզ:

Լեռները կրնան կորսուիլ եւ բլուրները չքանալ, բայց ողորմութիւնս անպակաս պիտի ըլլայ քու վրայէդ, խաղաղութեան ուխտս անասան պիտի մնայ,- կ'ըսէ ողորմած Տէրը:

Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափելոյ քարերով աշտարակներդ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիւրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՏԻՄՈԹԷՍԻ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.1-11)

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս չնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի, խնդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին սխալ վարդապետութիւններ ուսուցանելէ եւ չգբաղին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին ամրապնդման եւ Աստուծոյ փրկութեան ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բղխած սէրը: Շատեր այս պատուէրը մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

Գերագոյն
պատուիրանը
սէրն է.
անարատ
սրտէ, մաքուր
խղճմտանքէ
եւ անկեղծ
հաւատքէն
բղխած սէրը:

Գիտենք թէ Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի: Սակայն գիտենք նաեւ թէ օրէնքը արդարներուն համար դրուած չէ, այլ՝ անօրէններուն

Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի:

եւ անհանգանդներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր եւ մայր անարգողներուն, մարդասպաններուն, պոռնկութիւն ընողներուն, արուագէտներուն, մարդ առեւանգողներուն, ստախօսներուն, սուտ երգում տուողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ տուած պարկեշտութեան պատուէրներու. պատուէրներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ ես հաւատարմօրէն քարոզեցի եփեսացիներուն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(2.1-11)

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին:

Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունին»: «Մայր, ինձի այս մասին ըսելու պէտք չունիս», պատասխանեց Յիսուս, «իմ ժամանակս տակաւին չէ հասած»: Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսի ձեզի, կատարեցէ՛ք»:

Հրեաներու մաքրուելու սովորութեան համաձայն հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիդր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»: Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ մատակարարին տարէ՛ք»: Անոնք ալ տարին:

Մատակարարը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն մատակարարը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովնան, այն ատեն հասարակը, մինչ դուռն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

Նախապէս ցոյց տուի Հին Կտակարանեան երկու «կատարեալ» տիպարներու՝ Նոյի եւ Աբրահամի օրինակները: Հիմա պիտի նկարագրեմ Մովսէս մարգարէի տիպարը կամ աւելի ճիշդ՝ պիտի ցանկագրեմ Աստուծոյ հետ անոր փոխյարաբերութեան գլխաւոր գիծերը:

Կրնայ առարկուիլ, թէ Մովսէս մարգարէ «կատարեալ» չէ որակուած: Առաւել՝ իր տուած Օրէնքն ալ արդարացնելու անկարող յայտարարուած է (հմմտ Հո 3.27-28): Արդարեւ, Մովսէսի համար «կատարեալ է» չէ ըսուած: Բայց Աստուածաշունչին մէջ, ինչպէս մեր կեանքին մէջ որոշ բաներ թելադրականօրէն կ'ըսուին, եւ կը նշանակեն ճիշդ այն՝ ինչ որ ուղղակի բառով կամ բառերով ըսուած են: Այնքան ծանօթ է երեւոյթը, որ օրինակներ տալու պէտքը չկայ:

Յիսուս Լեբան Քարոզին մէջ ըսած է. «Մի՛ կարծէ՛ք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներուն ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէ՛ք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէս առ կէս պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկիրքն ու երկիրը պիտի անցնին» (Մտ 5.17-18): Ասիկա արդեօք կարելի չէ՞ նաեւ հասկնալ իբր Մովսէսի եւ մարգարէներուն արդարութեան անուղղակի հաստատում. միաժամանակ անոնց ընթացքին Աստուծոյ կողմէ կատարեալ համարում: Ըսի նախապէս, որ Աստուած ինքն է, որ մարդ էակը կ'արգարացնէ, եւ ինքն է, որ գայն կատարեալ կը համարէ: Յիսուսի խօսքին մէջ «ամբողջացնել» բային տակ կարելի է լսել «կատարեալի վերածել» միտքը: Աստուած ինքն է, որ կատարեալի կը վերածէ. թէ՛ խօսքերը, թէ՛ մարդերը եւ թէ՛ ամէն ինչ:

Կատարեալ
հոգիներ
միայն կրնան
խօսակիցներ
ըլլալ Աստուծոյ
Որդի
Կատարելութեան:

Մովսէսի «կատարեալ» համարուած ըլլալուն պայծառ պատկերը արձանագրուած է Յիսուսի Այլակերպութեան դրուագին մէջ: Լեբան վրայ Յիսուսի կողքին երեւցած դէմքերէն մէկը ինքն էր, իսկ միւսը՝ Եղիա մարգարէն: Անոնց խօսակցութիւնը Յիսուսի հետ՝ առաջնահերթաբար կը յայտնէ ներդաշնակութիւնը որ գիրենք իրարու

կը կապէր: Այդ ներդաշնակութիւնը կը վկայէր Մովսէսի եւ Եղիայի կատարեալ հոգիները ըլլալուն մասին: Նմանը կը գտնէ նմանը: Կատարեալ հոգիներ միայն կրնան խօսակիցներ ըլլալ Աստուծոյ Որդի Կատարելութեան:

Մովսէս մարգարէ «կատարեալ» մարդուն Աստուծոյ հետ փոխյարաբերութեան հիմնական եզրերը ասոնք են.–

Առաջին. Աստուած իր կամքը կը յայտնէ անոր իր հրեշտակին միջոցով. «Տիրոջ հրեշտակը կրակի բոցով մորենիին մէջէն» կ'երեւնայ անոր: Յայտնութիւնը տեղի կ'ունենայ Քորեբ լեռան վրայ (Ելք 3.1-2):

Հին ժամանակներուն, լեռները կը դիտուէին որպէս աստուածներու բնակարաններ: Նոյն հասկացողութիւնը ժառանգած էր նաեւ եբրայեցի ժողովուրդը: Որուն համար լեռները բնակարանն էին

միակ Աստուծոյ: Քորեբը Սինայի անապատին մէջն էր, զոր եբրայեցիք ճանչցան իբր «Աստուծոյ լեռ» (նոյն, հմր 1): Քորեբի վրայ յայտնութիւնը կ'արտօնէ

... լեռները բնակարանն էին միակ Աստուծոյ:

նաեւ թագրել, որ Մովսէսի հետ Աստուծոյ հրեշտակին հանդիպումը կու գայ հոգեւոր փորձառութեան մը բարձրակէտին: Այլ բացատրութեամբ մը՝ թէեւ Աստուած է, որ իր հրեշտակին միջոցով իր կամքը կը յայտնէր Մովսէսի, բայց Մովսէս ալ իր կարգին հոգեւոր աճումի ընթացք մը ունեցած էր մինչեւ աստուածային կամքի յայտնութեան արժանանալը:

Արդեօք անկէզ մորենիին պատկերը ի՞նչ կ'ըսէ: Հեթանոս աշխարհին մէջ ծառի պաշտամունքը ընդհանրացած էր. մարդիկ կը հաւատային, որ աստուածները կամ աստուածուհիները ծառերու մէջ կ'ապրին: Այդ հաւատալիքին արձագանգը կայ անկէզ մորենիի խորհրդանշանին մէջ: Առանց տարածուելու՝ անկէզ մորենին Աստուծոյ կամքին յայտնութեան միջոցն է: Ծանօթ է, որ Աստուծոյ ներկայութեան սերտօրէն կապուած է կրակի պատկերը.

... անկէզ մորենիին Աստուծոյ կամքին յայտնութեան միջոցն է:

Աստուածաշունչը բազմաթիւ օրինակներ ունի: Կրակը կը մաքրէ, նաեւ մահ կը պատճառէ: Աստուծոյ կամքին կրակը ընտրեալներուն մաքրամաքրում կը պատճառէ, իսկ ամբարիշտներուն՝ կորուստ: Արդ, Մովսէս անկէզ մորենիին

դիմաց կենալով՝ կանգնած կ'ըլլար Աստուծոյ կամքին առջեւ, որ փրկութիւն է ընտրուածներուն համար եւ մահ՝ Աստուծոյ օտարացածներուն:

Երկրորդ. Աստուած իր ծառան անունով կը ճանչնայ (Ան մարգարէին անունը կը կանչէ՝ «Մովսէս, Մովսէս», Ելք 3.4): Հին ատեն անուանել

կամ անունով ճանչնալ կը նշանակէր՝ տեսնել եմթակային էութիւնը կամ անոր գոյութիւնը հասկնալ: Մովսէս իր էութեամբ ճանչցուած էր Աստուծոյ, երբ անոր ներկայութեան կեցաւ:

Երրորդ. Տէրը ինքզինք կը յայտնէ իբր Աստուածը հայրերուն՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի: Ըստ Մովսէսի կրօնական փորձառութեան, Աստուծոյ ինքնայայտնութիւնը միայն իր անձին փորձառութիւնը չէ: Կրօնական փորձառութիւնը պատմութիւն ունի: Աստուած անձ մը կ'ընտրէ եւ անոր հետ փոխյարաբերութեան մէջ կը մտնէ, բայց իր այդ ընտրութեան եւ փոխյարաբերութեան սկզբունքները անձէ

Ան ազատագրութեան Աստուածն է. Ան իր ժողովուրդին գերութիւնը չ'ուզեր:

անձ չեն փոխուիր, այլ անոնք կը մնան նոյնը. այդ պատճառով ալ Աբրահամի Աստուածը՝ Իսահակի Աստուածն է, Իսահակի Աստուածը՝ Յակոբի Աստուածն է, եւ Յակոբի Աստուածը՝ բոլոր ընտրեալներուն Աստուածն է:

Չորրորդ. Տէրը ինքզինք Մովսէսի կը յայտնէ իբր ընտրած ժողովուրդով մտահոգ եւ անոր ազատագրութիւնը ուզող Աստուած: Ան ազատագրութեան Աստուածն է. Ան իր ժողովուրդին գերութիւնը չ'ուզեր:

Հինգերորդ. Մովսէս մարգարէի փորձառութեան մէջ Աստուած յայտնուած է իր Անունով. «Ես եմ Որ էն»: Աստուծոյ այս Անունը ցոյց կու տայ իր յաւիտենական գոյութիւնը: Տէրը յաւիտենական Աստուած է: Ուշագրաւ է, որ Աստուած իր Անուան առնչութեամբ հետեւեալը

Մովսէս մարգարէի փորձառութեան մէջ Աստուած յայտնուած է իր Անունով. «Ես եմ Որ էն»:

ըսած է Մովսէսի. «Ես եմ Եահուէն, որ Աբրահամին, Իսահակին, ու Յակոբին Ամենակարող Աստուծոյ անունով երեւցայ. բայց իմ Եահուէն Անունովս անոնց չ'յայտնուեցայ» (Ելք 6.2-3): Ուրեմն, Աստուծոյ ինքնայայտնութիւնը

հանգրուանային զարգացումով տեղի կ'ունենայ: Ասիկա իր կարգին կու գայ շեշտելու կրօնական փորձառութեան կարեւորութիւնը: Յաւիտենական Աստուածը ինքզինք կը յայտնէ պատմութեան մէջ, սակայն միշտ կը մնայ նոյն անփոփոխ էն: Իր էութեամբ Աստուծոյ ճանչցուած Մովսէս՝ պիտի հասնէր այն շնորհքին՝ որ Աստուծոյ Անունը «իմանար»:

Վեցերորդ. Աստուած ոչ թէ միայն ինք հրաշագործ է, այլեւ հրաշագործելու կարողութիւն կու տայ անոր՝ որ իր կամքին պիտի ծառայէ: Աստուած հրաշագործելու կարողութիւն կու տայ Մովսէսի:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ Փառաբանութիւն

Եօթներորդ. Տէրը Մովսէսի կը յայտնուի որպէս արդարութեան Աստուած: Աստուծոյ արդարութիւնը մերժողը ինքզինք եւ իրեն նման ուրիշներ կորուստի դատապարտած կ'ըլլայ (Փառաւոնի եւ եգիպտացիներուն պարագան):

Ութներորդ. Տէրը ինքն է իր ժողովուրդին փրկութեան առաջնորդը («Տէրը անոնց – Իսրայէլի որդիներուն – առջեւէն կ'երթար ցերեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցնելու համար, ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս տալու համար, որպէսզի ցերեկ եւ գիշեր երթան», Ելք 13.21): Իր կամքի գործադրութեան միջնորդն է միայն մարգարէն: Ան կ'առաջնորդէ՝ հետեւելով Աստուծոյ առաջանորդութեան:

Իններորդ. Մովսէս Աստուծոյ եւ իր ցեղին միջնորդ կը ներկայանայ: Ան խորապէս Աստուծոյ հետ է, սակայն միաժամանակ իր ժողովուրդին հետ կը արոփէ սիրտը (կարդալ ժողովուրդին համար իր աղօթքը Թւ 14.11-23):

Տասներորդ. Աստուած չի լքեր իր ժողովուրդը: Թոյլ կու տայ, որ անոնք փորձութիւններու ենթարկուին, սակայն երբեք չի լքեր զանոնք: Ըստ Մովսէսի, Աստուած կը փորձէ, որպէսզի իր երկիւղը ունենան մարդիկ եւ չմեղանչեն (հմտ Ելք 20.20):

Տասնմէկերորդ. Աստուած ինք աղբիւրն է ուղիղ ընթացքի համար կրօնա-բարոյական պատուիրաններու եւ ծիսական կանոններու: Անոնց պահպանութիւնը Ուխտմընէ Աստուծոյ հետ: Մովսէս մարգարէի փորձառութեան մէջ Աստուածակեդրոն ընկերային կեանքի եւ պաշտամունքի օրինադրողն է Տէրը: Իսկ ինք՝ Անոր հնազանդ սպասաւորը: Ըստ Մովսէսի փորձառութեան, Աստուծոյ կամքն է ուղղել մարդոց կենցաղը եւ պաշտամունքը:

Տասներկրորդ. Ուխտին պահպանումը պայմանն է, որ Աստուած իր ժողովուրդը սիրէ, զայն օրհնէ, շատցնէ, անոր երկիրը պողաբեր դարձնէ, անոր հիւանդութիւնները վերցնէ, անոր յաղթանակներ պարգեւէ (հմտ Բ. Օր 7.12-16), այլապէս կորուստը կայ (հմտ Բ. Օր 8.19-20): Մարգարէն այդ պայմանին նախանձախնդիր փոխանցողը եւ անոր յարգումը պահանջողն է:

Մովսէս մարգարէի ամենէն խոր փորձառութիւնը պիտի ըլլար Աստուծոյ հետ դէմ յանդիման տեսութիւնը: Այս մասին Բ. Օրինացի խմբագրական նօթը պիտի գրէր. «Իսրայէլի մէջ ուրիշ մարգարէ մը չելաւ Մովսէսի պէս, որ Տէրը երես առ երես ճանչցաւ» (Բ. Օր 34.10):

Կատարեալ մարդը Մովսէսի պէս անկէզ մորենիին դիմաց կը կանչուի եւ անոր կեանքը Աստուծոյ տէրութեան ենթակայ կ'ըլլայ ամբողջապէս:

Հարցում. Ընդհանրապէս կը յիշուի թէ, Քրիստոնեան միշտ փառք տալու է Աստուծոյ: Եթէ իսկապէս ուրախ չեմ, Աստուծոյ փառք տալս կեղծաւորութիւնն չէ՞: Պատասխան. Այո, քանի Աստուծոյ փառք տալը գոհունակութեան արտայայտութիւն՝ գոհաբանական արարք է, կարելոք է որ սրտաբուխ եւ անկեղծ ըլլայ:

Ուրեմն հարցումդ այն է, թէ ինչո՞ւ փառք տաս Աստուծոյ երբ պայմաններդ լաւ չեն:

Ես ալ իմ կարգիս հետեւեալ հարցումը ուղղեմ քեզի. միայն ուրախութեան՞ը համար փառք կու տաս Աստուծոյ: Աստուծոյ բարիքներու արժեքափը ուրախութի՞ւնդ է. եթէ ուրախ չըլլաս՝ ուրեմն աշխարհի մէջ լաւ բան չէ՞ մնացած: Դիտանկիւնդ կը թուի բաւական եսակեդրոն ըլլալ:

Փառաբանութիւնը որ աղօթք է, ինչպէս ամէն աղօթք՝ հաղորդակցութիւն ստեղծելով մարդուն եւ Աստուծոյ միջեւ, մարդս դուրս կը բերէ իր նեղմիտ աշխարհայեացքէն:

Փառք տալը Աստուծոյ ողորմածութիւնը յիշելու սովորութիւն է՝ մեր մտքերը յուսալից ու հաւատքէն զերջնաղ դրական տրամադրութեամբ լարելու. ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ, ձայնակցիլ է երկնքին ու սուրբերուն՝ դուրս գալով ես-ի նեղ շրջագիծէն. «Երկինքը սքանչելիքներդ կը գովերգէ, Տէ՛ր, սուրբերու հաւաքոյթը քու հաւատարմութիւնդ կը գովերգէ» (Սղ 89.5):

Փառաբանանքը տառապանքին ու ցաւին հակադրելու գէնք է եւ հոգեւոր պատերազմին մէջ՝ բարիին արդար կողմակցութիւն: Այս իրապաշտ լաւատեսութիւնը՝ խոնարհութեամբ ընդունիլ է, որ Ամենակալ Տէրն է կեանք տուող ու պահող միակ աղբիւրը:

Փառաբանական արարքը, բարիին շարժումները տեսնելու, ճանչնալու եւ անոնց գործակցելու խոստում է: Երբ կը փառաբանես զԱստուած, ցոյց կու տաս, թէ հակառակ արտաքին պայմաններուդ՝ ներքինապէս հաստատ միտք մը ունիս, որուն միջոցաւ կամովին մասնակից ես բարիի յաղթանակին:

Փառաբանանքը, նախ կը սկսի որպէս յաղթական մտքի պատրաստութիւն, ապա բարի սովորութեամբ, կը դառնայ յաղթական մտքի արդիւնք:

Ուրեմն հարցը անկեղծութեան հարց չէ, այլ՝ յանձնառութեան եւ հոգեւոր մարտունակութեան: Եթէ կեանքի պայքարը ստանցնած ես, նախ կը տեսնես այն ինչ բարի է կեանքիդ եւ շրջապատիդ

ՀՈՒՐԻ
ԳՔ

մէջ, ապա գայն մտփիդ կիզակէտը դարձնելով, փառք կու տաս Աստուծոյ: Այդպիսով ստանալու պատրաստակամութիւնդ կը յայտնես եւ Աստուծոյ նորանոր բարիքներուն առջեւ կը բացուիս:

Ամբողջ հարցը մտփի նորոգութեան հարց է... ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «նորոգուած միտքերով նոր մարդ եղէք» (Հո 12.2): Սահմանափակ եւ ժամանակաւոր հարցերուդ դիմաց, լայնցո՛ւր միտփդ, Աստուծոյ անսահման եւ անժամանակ լուծումներուն առջեւ:

Բացարձակօրէն դժուարութիւններդ թերագնահատելու փորձ չէ այս, այլ՝ անոնց նկատմամբ կեցուածքդ վերակողմնորոշելու թելադրութիւն, որպէսզի «գաւաթին լեցուն կէսը» տեսնելով, Աստուծոյ օգնութիւնը ընդունիս, հոգեւոր ներուժ ամբարես, բարիքն գործակից մնաս ու գուարթութեամբ դիմաւորես վայրկեանը:

Յիսուս իր կեանքով օրինակ դարձաւ մեզի: Աւելի քան հինգ հազարի կերակրումէն առաջ, Ան չըսաւ թէ հացի հինգ նկանակներն ու երկու ձուկերը անբաւարար էին: Նախ գոհացաւ եւ ապա բաժնեց: Նմանապէս իր «արեան» բաժակը առաքեալներուն տալէ առաջ գոհացաւ, կ'ըսէ աւետարանը:

Իսկ Երեմիա մարգարէն կ'ըսէ. «Փա՛ռք տուէք Տէրոջ՝ ձեր Աստուծոյն, դեռ խաւարը ձեր վրայ չբերած եւ ձեր ոտքերը մոլթ լեռներուն չսահած...» (Եր 13.16): Գոհ եղած ատենդ ինքզինքդ փառաբանութեան վարժեցուր, վերջապէս հասկնալու համար թէ իսկական գոհունակութիւնը ներքին տրամադրութիւն է եւ ոչ թէ՝ արտաքին պայման: Լաւ եղած ատենդ փառաւորէ զԱստուած, որպէսզի երբ դժուար օրերը գան, սովորութիւն

իսկական գոհունակութիւնը ներքին տրամադրութիւն է եւ ոչ թէ՝ արտաքին պայման:

ըրած ըլլաս պայմաններէդ անկախ մտածելով գոհ ըլլալ, ինչպէս առաքեալը կ'ըսէ. «ունեցածովս գոհ ըլլալու վարժուած եմ» (Փլպ 4.11): Այն ատեն գոհունակ արտիդ անսալով՝ բերանդ անդադար զԱստուած պիտի օրհներգէ, ամբողջ օրը զԱյն

պիտի փառաւորէ (Սդ 71.8), ապրելով այնպէս՝ որ Աստուած փառաւորուի մարմինովդ (Ա. Կր 6.20):

Վերջապէս սաղմոսերգուին մարդոց ուղղած խրատը մէջբերելով, չմոռնանք գոհութիւն յայտնել Տիրոջ իր անսահման սիրոյն համար (Սդ 107.8) որ յայտնեց իր միակ Որդին դրկելով աշխարհ:

Եւ շրջանցելով մեր ներքին պատերը, հաւատալով ու յուսալով Յիսուսի խոստումին, թէ Ան ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնէ (Յտ 21.5), միաձայն յարատեւ կրկնենք.

«Փառք Քեզ Տէր»:

Կ.Ն.

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՆՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ: (II)

Յիսուսի անապատային փորձութիւնը իր մեսիական առաքելութեան կապուած նշանակութիւն ալ ունի: Առաջին փորձութիւնը, որ անօթութեան կը վերաբերի, արդեօք ի՞նչ կ'ըսէ:

Յիսուս Հօր Աստուծոյ կողմէ առաքուած էր, ու այդ պառճառով ալ իր առաքելութեան ընթացքին կատարածները ցոյց տուաւ որպէս կատարում Անոր կամքին:

Անօթութիւնը մարմինին մէկ պահանջքն է: Անիկա բնութեան մէկ օրէնքն է, եւ ոեւէ մարդ արարած բնութեան օրէնքները չի կրնար խախտել: Բայց մենք գիտենք, որ այդ պահանջքները մեր կամքին ենթակայ են. մարդ արարածը իր մարմինին պահանջքները ղեկավարելու կարողութիւնը ունի: Ատիկա միտքն է: Միտքը մարմինին պահանջքները կրնայ ղեկավարել: Յիսուս իբր Հօր իմաստութիւնը՝ առաւել քան զմարդ ունէր անօթութեան պահանջքը ղեկավարելու կարողութիւնը: Եւ իր այդ կարողութիւնը կը բխէր Աստուծոյ կամքին իր հնազանդութենէն:

Իբր փորձութիւն՝ անօթութիւնը կը խորհրդանշէ մարմնական տկարութիւնները: Սատանային կամքն էր Աստուծոյ մեսիան մղել մարմնականը խորհելու, մարմնականին

ենթարկուելու եւ հետեւաբար Աստուծոյ չհնազանդելու: Այս փորձութեան դիմաց Յիսուս կը յայտնէր իր ամբողջական հնազանդութիւնը Հօր Աստուծոյ կամքին, եւ Անոր խօսքերուն կենսատու բնոյթը կը յայտարարէր. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով, որ Աստուած խօսած է»:

Իր մեսիական առաքելութեան առաջին պաշտօնն էր քարոզութիւնը, այսինքն՝ Աստուծոյ խօսքերուն աւետարանումը: Սատանան կ'ուզէր զայն խափանել եւ չյաջողեցաւ:

Սատանան կը մէջբերէ 91 (90).11-12 սաղմոսը: Փորձութեան առաջին առիթով, ան ուզած էր Աստուծոյ մեսիան անհնազանդութեան մղել: Երկրորդ առիթին՝ կ'ուզէ առ Աստուած

Սատանային կամքն էր Աստուծոյ մեսիան մղել մարմնականը խորհելու, մարմնականին ենթարկուելու եւ հետեւաբար Աստուծոյ չհնազանդելու:

անոր վստահութեան վրայ խաղալով՝ անոր առաքելութեան երկրորդ պաշտօնին կատարումը արգելել, այսինքն՝ արգելել Հօր անունով անոր կատարելիք գործերուն իրականացումը: Յիսուսի ամբողջ գործունէութիւնը պիտի ըլլար ուրիշներուն սպասաւորել, եւ ոչ թէ ակնկալել որ ուրիշները իրեն սպասաւորեն:

Հետեւաբար պէտք չունէր ծառայութիւն եւ պաշտամունք սպասելու մարդոցմէ: Հարկաւ երբ մարդիկ իրեն ծառայութիւն մատուցին՝ չմերժեց, որովհետեւ անոր մէջ տեսաւ մարդոց իրեն հանդէպ ունեցած սէրը: Օրինակ՝ յիշել մեղաւոր կինը, որ թանկագին իւղը բերաւ եւ իր գլխուն թափեց (Մտ 26.6-7: Մկ 14.3): Հիմնական ճշմարտութիւնը այն է, որ Յիսուսի մեսիական առաքելութիւնը ծառայութիւն ընդունելու համար չէր, այլ ծառայելու: Եւ իր ծառայութիւնը պիտի ըլլար բերապատիկ աւելի քան մարդոցմէ իր ստացածը. իր ծառայութիւնը պիտի ըլլար «չատերու համար որպէս փրկագին» (Մկ 10.45):

Յիսուսի մեսիական առաքելութեան գլխաւոր նպատակը մարդոց ազատագրութիւնն էր...

Սատանան սպասաւորուելու ցանկութեան մէջ նետել փորձելով՝ Յիսուսի մեսիական առաքելութեան նպատակը շրջել կ'ուզէր: Անոր գործունէութիւնը Աստուծոյ փրկարար կամքին իրականացման համար էր: Սատանան ատիկա խանգարելու համար՝ կու գար զԱստուած

փորձելու մէջ ձգել Յիսուսը: Սակայն Յիսուս իր պատասխանով կը յայտարարէր՝ թէ առ Աստուած իր վստահութիւնը անխախտելի է:

Յիսուսի մեսիական առաքելութեան գլխաւոր նպատակը մարդոց ազատագրութիւնն էր, եւ ազատագրուած մարդկութեամբ՝ Աստուծոյ թագաւորութիւնը հաստատել: Սատանան երրորդ անգամ գալով՝ կ'ուզէր որ Յիսուս փոխանակ Աստուծոյ թագաւորութեան համար ծառայելու՝ ծառայէր իրեն, եւ որուն փոխարէն կը խոստանար տալ «աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ անոնց փառքը»: Սատանան Յիսուսի կ'ըսէր. «Այս

բոլորը քեզի՛ կու տամ, եթէ երկրպագելով պաշտես զիս»: Հին ժամանակներուն, մարդիկ թագաւորներու առջեւ կ'երկրպագէին: Սատանան Յիսուսէն կ'ուզէր, որ ան զինք իբր թագաւոր ընդունի: Աշխարհի, աւելի ճիշդ՝ աշխարհիկ բոլոր թագաւորութիւններն ու անոնց փառքը Սատանային ենթակայ են, եւ ան մարդոց ազատագրութիւնը չ'ուզեր, այլ անոնց գերութիւնը: «Ետի՛ս գնա» ըսելով՝ Յիսուս իր մեսիայութիւնը կը յայտնէր իբր Աստուծոյ թագաւորութեան հաստատման համար ծառայութիւն:

ՅՈՒՌՈՒ ԳԱՂՈՒՄԻ ՄԷՋ ԻՐ ԱՌԱՔԵՂՈՒԹԻՒՆ ԿՐ ՍԿԱՐ:

«Երբ Յիսուս լսեց, թէ Յովհաննէս բաւոտարկուեցաւ, մեկնեցաւ գնաց Գալիլիա, եւ ձգելով Նազարէթը, եկաւ բնակեցաւ լիհնի եզերքը գտնուող Կափառնաում քաղաքը, Զարուղոնի եւ Նեփթալիմի սահմաններուն մէջ: Այսպիսով իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը կ'ըսէ Եսայի մարգարէին բերնով.–

Ո՛վ երկիր Զաբուղոնի, ո՛վ երկիր Նեփթալիմի, ճամբայ՝ որ ծովէն Յորդանան գետ կը տանի. դո՛ւն, Գալիլիա՛, հեթանոսներու երկիր: Այն ժողովուրդը որ խաւարի մէջ կ'ապրէր,

մեծ լոյս մը տեսաւ.

եւ մահուան աշխարհին ու շուքին մէջ ապրողներուն վրայ լոյս ծագեցաւ:

Եւ այդ օրէն Յիսուս սկսաւ քարոզել, ըսելով.– Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ Երկինքի արքայութիւնը մօտեցած է» (4.12-17):

Ո՞ւր էր Յիսուս երբ լսեց Յովհաննէս Մկրտիչի բանտարկուելը: Նախորդ բաժինը մեզի կը պատմէր Յիսուսի անապատային փորձութեան մասին: Թէ ո՞ւր էր այդ անապատը՝ չէ ըսուած: Գիտենք, որ ան Յորդանան գետին մէջ մկրտուելէ ետք Ս. Հոգիին կողմէ անապատ պիտի տարուէր: 3.1-ին համաձայն, Յովհաննէս Մկրտիչ իր քարոզութիւնը Հրէաստանի անապատին մէջ կը կատարէր: Նախապէս ըսած էի, որ այդ անապատը Երուսաղէմի արեւելքէն մինչեւ Մեռեալ ծով երկարող տարածութիւն մըն էր: Հաւանաբար, յետ մկրտութեան Յիսուս այնտեղ տարուած էր փորձուելու համար:

Եւ փորձութենէն ետքը կը լսէր Յովհաննէս Մկրտիչի բանտարկուելը: Հասկնալի է, որ Յիսուս անապատէն դարձած էր եւ ընկերութեան մէջ մտած էր, որ լսեց: Բայց ո՞ւր: Յովհաննէս աւետարանիչ մեզ կը լուսաբանէ: Իր գրած աւետարանի առաջին գլուխէն կ'իմանանք, որ Յիսուս մկրտուելէ ետք իր գործունէութեան սկսաւ Յորդանանի մերձակայ շրջաններուն կամ Հրէաստանի մէջ: Յիսուսի առաքելութեան սկզբնական հանգրուանն է ասիկա: Ահա այստեղ է,

որ ան լսեց Յովհաննէս Մկրտիչի բանտարկուիլը, եւ որոշեց Գալիլիա դառնալ:

Սկզբնապէս Նազարէթ պիտի երթար՝ ծնողական տունը: Ապա հոնկէ պիտի անցնէր Կափառնաուժ եւ այնտեղ բնակէր: Յիսուս սեփական տո՞ւն ունէր Կափառնաուժի մէջ, թէ հարազատներու մօտ կը բնակէր: Գիտենք, որ իր աշակերտներէն Պետրոսի տունը Կափառնաուժի ժողովարանին մօտիկ էր: Արդեօք Պետրոսի մօտ կը բնակէր: Այս մասին հաստատ բան կարելի չէ ըսել:

Իսկ ինչո՞ւ Յիսուս որոշեց Գալիլիոյ մէջ իր առաքելութիւնը ծաւալել: Առաւել՝ ինչո՞ւ Կափառնաուժը ընտրեց որպէս իրեն կայք կամ կեդրոնական վայր:

Մատթէոս աւետարանիչ ըստ իր սովորութեան հրեայ մտքին ցոյց կու տայ մարգարէական կանխաստութեան մը կատարումը: Եսայի մարգարէի 9.1-2-ը կը մէջբերէ: Ըստ աւետարանիչին, կանխաստութիւնը կը վերաբերէր Յիսուսի Կափառնաուժ քաղաք փոխադրուելուն եւ առաքելութեան: Մարգարէէն քաղուած հատուածին մէջ երկու «երկիր»ներ կը յիշուին. մէկուն անունը Ջաբուղոն է, միւսին անունը՝ Նեփթաղիմ: Ասոնք Գալիլիոյ հիւսիս-արեւելեան կողմը տարածուող չրջաններ էին: Ծանօթ է, որ Ջաբուղոն եւ Նեփթաղիմ Յակոբ Նահապետի երկու զաւակներն էին: Վերոյիշեալ չրջաններուն մէջ կ'ապրէին անոնց սերունդները: Անոնք կ'ապրէին հեթանոսներու հետ:

722/721 թուականին Իսրայէլի թագաւորութիւնը Ասուրեսատանի Սարգոն Բ. արքային կողմէ պիտի կործանէր եւ ժողովուրդը պիտի գերեզմարուէր: Արքան գերեզմարեալ ժողովուրդին տեղ օտար բնակիչներ պիտի լեցնէր: Հեթանոսներու երկրորդ անգամ բնակեցում պիտի ըլլար Մեծն Աղեքսանդրի եւ Սելեւկեան կայսրերու ժամանակ, երբ յոյներ եւ հռոմէացիներ Գալիլիա պիտի գային եւ բնակէին:

Այս երկու պատճառներով Գալիլիան դիմագիծ պիտի փոխէր եւ «հեթանոսներու երկիր» պիտի կոչուէր:

Ո՞վ խաւարի մէջ էր, ո՞վ էր «մեծ լոյս»ը:

Հեթանոս ժողովուրդն է, որ խաւարին մէջն էր: Իսկ «մեծ լոյս»ը՝ Քրիստոս ինքն է:

...«մեծ լոյս»ը՝
Քրիստոս ինքն
է:

Բայց ինչո՞ւ համար Մատթէոս աւետարանիչ Յիսուսի առաքելութեան սկզբնաւորութեան այս կանխաստութիւնը կ'արձանագրէր: Յիսուսի առաքելութիւնը իր ժողովուրդին կողմէ պիտի մերժուէր: Ան պիտի

չարչարուէր եւ խաչուէր: Եւ յետ յարութեան Յիսուս իր աշակերտներուն պիտի երեւէր Գալիլիոյ մէկ լեռան վրայ եւ անոնց պատգամէր. «գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք» (Մտ 28.19): Ինչպէս իր առաքելութեան ծաւալումը պիտի սկսէր Գալիլիայէն, նոյնպէս բոլոր ժողովուրդներուն աւետարանելու իր պատգամը Գալիլիոյ մէջ պիտի տար: Ինչո՞ւ համար: Աստուած յստակօրէն կը յայտնէ, որ Երուսաղէմը ալ իրեն համար կեդրոն չէ: Աստուած կը մերժէ երկրաւոր Երուսաղէմը կամ ծիսական կեդրոն դարձած քաղաքը:

Հետեւաբար, Եսայի մարգարէի խօսքը թէ՛ «Այն ժողովուրդը որ խաւարի մէջ կ'ապրէր, մեծ լոյս մը տեսաւ», ըսել կ'ուզէ, որ հեթանոս աշխարհը Յիսուսի եւ ապա իր առաքեալներուն գործունէութեամբ պիտի լուսաւորուէր, այսինքն՝ մեղքին գերութենէն պիտի ազատագրուէր եւ դառնար Աստուծոյ նոր ժողովուրդը:

«Եւ այդ օրէն Յիսուս սկսաւ քարոզել, ըսելով.՝ Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ Երկինքի արքայութիւնը մօտեցած է»:

Յովհաննէս Մկրտիչ ալ նոյն բանը կ'ըսէր: Անշուշտ թէ՛ Յովհաննէս

Մկրտիչ եւ թէ Յիսուս երկու նախադասութեամբ քարոզ չէ, որ կու տային: Այս խօսքը խտացումն էր երկուքին ալ ընդարձակ քարոզութեան: «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ Երկինքի արքայութիւնը մօտեցած է» յայտարարութիւնը կորիզն էր Յովհաննէս Մկրտիչի եւ Յիսուս քարոզութեան: Նոյն յայտարարութիւնը սակայն՝ Յովհաննէս Մկրտիչի պարագային ուրիշ իմաստ մը ունէր, Յիսուսի պարագային՝ ուրիշ: Յովհաննէս Մկրտիչ զայն կը կատարէր իբր «Տիրոջ ճամբան» պատրաստողը, իսկ Յիսուս զայն կը կատարէր իբր նոյնինքն Տէրը: Արքայութիւնը որուն մասին Յիսուս կը խօսէր՝ իր արքայութիւնն էր: Եւ ինչպէս Պիղատոսի առջեւ պիտի բացատրէր՝ իր արքայութիւնը երկրաւոր չէր, այլ երկնաւոր էր (Հմմտ ՅՃ 18.36): Յիսուս իր քարոզութեամբ կը հրաւիրէր մարդիկը իր հոգեւոր արքայութեան հպատակները ըլլալու, այսինքն՝ իրենց անձերը ենթարկելու Աստուծոյ կամքին:

«Ապաշխարեցէ՛ք,
որովհետեւ
Երկինքի
արքայութիւնը
մօտեցած է»

(Շարունակելի 10)

**Յաջորդ շաբաթուայ
Ժամանակացոյց**

Երեքշաբթի, 22 Յուլիս 2008

08.30 > Պտոյտ՝ դէպի Մարի ՐԷՆ ՏԷ ԳԵՕՐ
Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Յիւզշաբթի, 24 Յուլիս 2008

11.00 > Աղօթաժողով՝
Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Կիրակի, 27 Յուլիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն
11.00 > Ս. ԵՆ անմահ Պատարագ

ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ

**ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ
Կը վերսկսի**

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008-Ի ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹԸ

ՀԻՒԱՌԱՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիփն:

Ս. ՅԱԿՈԲ ԲՈՅՐԵՐՈՒ ԺՈՂՈՎ

**ՊՏՈՅՏ ԴԵՊԻ
ՄԱՐԻ ՐԷՆ ՏԷԳԵՕՐ**

ԵՐԵՔՇԱԲԹԻ 22 ՅՈՒԼԻՍ 2008-Ի
ԺԱՍՆ 8.30-16.00

ՍԵԿՆՈՒՄ ԵԿԵՂԵՑԻԷՆ ԺԱՍՆ 8.30-ԻՆ

**Ս. ՅԱԿՈԲ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
29ՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆ**

**վերամուտ՝
ԿԻՐԱԿԻ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008**

Մանրամասնութեանց համար դիմել
Տնօրէնին՝ Պրն Թորոս Պապիկեանին
514 956 1277 կամ
director@sourphagop.org

կայքէջ՝
www.sourphagop.org

«Մաշտոցի Արձագանգ»
www.sourphagop.org/mashdots

**ԵԿԵՂԵՑՈՅՈՅ ԹԵՐԹԻԿԻ ԱՆԽՈՐԴ
ԹԻԲԵՐ ԿՐԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՋԷՉԻՆ ԿՐԱՅ**

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՆ ԱՆԽՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԿԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑՈՅՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**ՀԱՄԱՅՆՔԻԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ**

ԲՆՅ Է
ԵՐԿՈՒԷՐԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ
ԺԱՄՆ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԿԵԼ ԸՆԴՏՈՒՊԱՐԻՆ՝
514 331 5445 x202
ԿԱՄ ՀՆՈՎԻՆ՝
514 331 5445 x203
ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԿԵԱԼ Ե-ՀԱՍՅԷԻՆ՝
eglise58@sourphagop.com